

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016թ.

„-----“, ----- 2016թ.

(արձանագրություն №)

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Վարժարանը ստեղծվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 1997թ.-ի մարտի 25-ին № 43Մ հրամանով, որպես Հայկական գյուղատնտեսական ակադեմիային կից կրթական կառույց, որն այժմ գործում է <<Հայաստանի ազգային ագրարային համալսարան>> հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կազմում, որպես բնագիտամաթեմատիկական հոսքով և անվճար ուսուցմամբ հանրակրթության երրորդ աստիճանի՝ Ավագ դպրոցի կրթական ծրագրով Սովորողների ուսուցում իրականացնող և ուսումնամեթոդական գործընթաց կազմակերպող կառուցվածքային ստորաբաժանում:
2. Վարժարանի կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն) մշակված է <<Կրթության մասին>>, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների և <<Հայաստանի ազգային ագրարային համալսարան>> հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) Կանոնադրության հիման վրա:

3. Սույն Կանոնադրությամբ սահմանվում են Վարժարանի գործունեության առարկան, նպատակը, հիմնական խնդիրները, իրավասությունը, ուսումնական գործընթացը, կառավարումը, կառուցվածքը և գործունեության ընթացակարգը:
4. Վարժարանն իրավաբանական անձ չէ և Համալսարանի անունից լիազորված է իրականացնել գործունեություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Համալսարանի կանոնադրության և սույն Կանոնադրության պահանջներին համապատասխան:
5. Վարժարանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա ուսումնական հաստատությունների ու կազմակերպությունների հետ:
6. Վարժարանում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն: Կրոնական գործունեությունը և քարոզչությունը արգելվում է՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
7. Վարժարանը հանրակրթական ծրագրերով իրականացնում է ուսուցում 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններում: Այլ դպրոցներից Վարժարանի համալրումը կարող է կատարվել նաև այդ դպրոցների 11-րդ և 12-րդ դասարաններից՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ սովորողների գիտելիքների ստուգմամբ:
8. Վարժարանի անվանումն է <<Հայաստանի ազգային ազրարային համալսարան>> հիմնադրամի <<Հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարան>> :
Лицей общеобразовательных обучающихся программ НАУА
Lyceum of comprehensive program teaching
9. Վարժարանն ունի իր անվամբ կլոր կնիք, ձևաթուղթ և այլ վավերապայմաններ:
10. Վարժարանի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան 375033, Տերյան 74 (Կորյունի 19):

II ՎԱՐՇԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

11. Վարժարանի գործունեության առարկան հանրակրթության Ավագ դպրոցի կրթական հիմնական և լրացուցիչ ծրագրերի իրականացումն է:

12. Վարժարանի գործունեության նպատակն է ապահովել՝

1) սովորողների՝ հանրակրթության պետական չափորոշիչի և Ավագ դպրոցի ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, սովորողների առողջության պահպանումը, ինչպես նաև ինքնակրթության և լրացուցիչ կրթության պահանջմունքների բավարարման պայմանները,

2) սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացումը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորումը, մասնագիտական կողմնորոշումը և մասնագիտական կրթության նախապատրաստումը:

13. Վարժարանի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա:

14. Վարժարանը պատասխանատու է հանրակրթության Ավագ դպրոցի պետական չափորոշիչի և պետական ծրագրի պահանջների ապահովումը, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական ու սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին և ընդունակություններին համապատասխան կրթության բովանդակության ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

III. ՎԱՐՇԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

15. Վարժարանի հիմնական խնդիրներն են՝

ապահովել.

1) ուսումնական գործընթացներում սովորողների ակադեմիական բարձր առաջադիմությունը և մտավոր զարգացման գործընթացների արդյունավետությունը,

2) ուսուցման որակի ապահովման, գնահատման ու վերահսկման միջազգային ստանդարտների ներդրումը,

- 3) Ավագ դպրոցի պետական կրթական չափորոշիչներին, ծրագրերին և ուսումնական պլաններին համապատասխան ուսուցման իրականացումը,
- 4) ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը Հայաստանի Հանրապետության պետական և միջազգային չափորոշիչներին ու ստանդարտներին համապատասխան կազմակերպելու, պարբերաբար նորացնելու և իրականացնելու գործընթացները,
- 5) սովորողների կողմից Վարժարանի հիմնական և լրացուցիչ ծրագրերի յուրացումը, առարկայական չափորոշիչների պահանջների կատարումը, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերումը,
- 6) ուսուցիչների գիտելիքների, աշխատանքային կարողությունների, հմտությունների համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին, որակավորման տարակարգերին և բնութագրերին,
- 7) սովորողների՝ որպես անհատի համակողմանի զարգացման, ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակման պայմաններ և սովորողների արդյունավետ ուսուցման նպաստավոր միջավայր,
- 8) Վարժարանի սովորողների գիտելիքների մրցունակությունը,
- 9) գործունեության ընթացակարգերի և գործընթացների թափանցելիությունը, հրապարակայնությունը և մատչելիությունը,
- 10) սովորողների կողմից հանրակրթության պետական չափորոշիչների ու առարկայական չափորոշիչների և ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, ինչպես նաև ինքնակրթության և լրացուցիչ կրթության պահանջմունքների բավարարումը,
- 11) Ավագ դպրոցի սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական ու սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին և ընդունակություններին համապատասխան կրթության բովանդակության, լրացուցիչ կրթական ծրագրերով տարբերակված հոսքային ուսուցման,

գիտելիքների յուրացման արդյունավետ մեթոդների և ձևերի ներդրումը, ինչպես նաև սովորողների կյանքի անվտանգության և առողջության պահպանումը,

IV. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ,

ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ԵՎ ԱԶԱՏՈՒՄԸ

16. Վարժարանում ընդունելությունը, տեղափոխումը և ազատումը կատարվում են ՀՀ կրթության և գիտության նախարարի 24.11.2010թ. N 1640-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման» կարգի համաձայն:
17. Սովորողի ընդունելությունը իրականացվում է Համալսարանի ռեկտորի հրամանով՝ Սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի (այսուհետ՝ Ծնող) դիմումի և Համալսարանի ու Ծնողի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով:
18. Վարժարանի տնօրենը պարտավոր է սովորողներին և նրանց ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին ծանոթացնել Վարժարանի Կանոնադրությանը և ուսուցման գործընթացը կարգավորող այլ ակտերին:
19. Սովորողին այլ Ավագ դպրոց տեղափոխելը և ազատելը կատարվում է 16-րդ կետում նշված կարգի համաձայն՝ հետևյալ դեպքերում.
 - 1) Ծնողի դիմումի հիման վրա,
 - 2) դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիմա վրա:

V. ՎԱՐՇԱՐԱՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

20. Վարժարանն իրավասու է՝

- 1) ընդունել ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը և սույն Կանոնադրությանը.

2) իրականացվող մանկավարժական և ուսումնասօժանողական գործունեությանը համապատասխան, ըստ սահմանված չափորոշիչների՝ ռեկտորի հաստատմանը ներկայացնել տարիֆիկացիոն ցուցակը (աշխատավարձերի հաշվառման մատյանը),

3) կազմել ուսումնական պլաններ՝ հիմք ընդունելով պետական լիազորված մարմնի կողմից հաստատված օրինակելի ուսումնական պլանները,

ա) ենթահոսքի սահմանումը հոսքային առարկաների ընտրությամբ,

բ) Վարժարանի ուսումնական պլաններում առանձին առարկաներին հատկացվող ժամերի քանակը չպետք է պակաս լինի պետական լիազորված մարմնի կողմից հաստատված օրինակելի ուսումնական պլանով նախատեսված ժամերի քանակից:

4) ըստ կրթական ծրագրերի, ինչպես նաև լրացուցիչ կրթական ծրագրերին համապատասխան կազմակերպել

ա) սովորողների ուսումնական գործընթացը,

բ) վճարովի ծառայություններ առարկայական դասընթացների միջոցով,

գ) անհատական ուսուցում՝ պետական լիազորված մարմնի սահմանած կարգով,

դ) սովորողների հանգիստը,

5) ինքնուրույն տնօրինել իրեն հատկացված արտաբյուջետային ֆինանսական միջոցները:

21. Վարժարանը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները

1) լրացուցիչ հանրակրթական դասընթացներ,

2) արտադպրոցական դաստիարակություն:

3) նախապատրաստական դասընթացներ 9-րդ դասարանի աշակերտների համար:

22. Վարժարանի հանրակրթական հիմնական ծրագրերի յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին իրականացնել սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների՝ հանրակրթության պետական չափորոշիչի

պահանջներին համապատասխանության ստուգում՝ փոխադրական քննություններ:

VI. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

23. Վարժարանի ուսումնական գործընթացը իրականացվում է Ծնողի (կամ օրինական ներկայացուցիչի) և Համալսարանի միջև կնքված պայմանագրի վրա հիմնված հարաբերություններով:

24. Վարժարանի սովորողների ուսումնական գործընթացը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական և միջազգային կրթական չափորոշիչներով նախատեսված առարկայական ծրագրերին, ուսումնական պլաններին և ուսումնական ժամանակացույցին համապատասխան:

25. Վարժարանում ուսուցումն իրականացվում է առկա ձևով, հանրակրթության Ավագ դպրոցի հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերով՝ երեք տարի տևողությամբ:

26. Վարժարանում կրթական հիմնական ծրագրերը՝ որպես անբաժանելի մաս, ներառում են՝

- 1) ուսումնամեթոդական, փորձարարական հետազոտական աշխատանքները,
- 2) մանկավարժների մասնագիտական կատարելագործման միջոցառումները,
- 3) սովորողների համար լրացուցիչ դասընթացների կազմակերպումը,
- 4) սովորողների առողջության պահպանման միջոցառումները,
- 5) սովորողների սննդի կազմակերպումը,
- 6) ուսումնաարտադրական բազաներում, մարզաառողջարարական ճամբարներում սովորողների ուսուցման, դաստիարակության ու հանգստի կազմակերպումը:

27. Վարժարանում ուսուցումն ու դաստիարակությունը իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

28. Սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գնահատումը, դրանց ձևերի, մեթոդների, հաճախականության, առաջադրանքների բովանդակության ընտրությունը

կատարում է Վարժարանը հանրակրթության պետական չափորոշիչին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

29. Վարժարանի շրջանավարտին տրվում է Ավագ դպրոցի ծրագրերի յուրացումը հավաստող ավարտական փաստաթուղթ՝ լրիվ (ընդհանուր) կրթության ատեստատ:
30. Վարժարանն ուսման մեջ բացառիկ հաջողությունների հասած Վարժարանի շրջանավարտներին կարող է ներկայացնել ուսման գերազանցության մեդալով պարգևատրման ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգով: Տարեկան գերազանց առաջադիմություն և լավ վարք, ինչպես նաև առանձին ուսումնական առարկաներից գերազանց առաջադիմություն ունեցող սովորողները նախարարության սահմանած կարգով պարգևատրվում են գովասանագրերով:
31. Ուսումնական տարվա ավարտին մանկավարժական խորհրդի որոշմամբ հաստատված ժամանակացույցով անցկացվում են փոխադրական քննություններ՝ տվյալ ենթահոսքի խորացված առարկաներից:
32. Տարեկան և փոխադրական քննությունների արդյունքով մանկավարժական խորհուրդը որոշում է յուրաքանչյուր աշակերտի հաջորդ դասարան փոխադրումը, վերաքննություն նշանակելը կամ Վարժարանից ազատելը:
33. Վարժարանում ուսումնական գործընթացը կարող է իրականացվել խմբային կամ անհատական ուսուցման եղանակով:
34. Վարժարանի դասարանների կազմավորման կարգը՝ ըստ դասարանի խտության և սովորողների կողմից ուսումնասիրվող հոսքային առարկաների, սահմանվում է պետական լիազորված մարմնի կողմից: Սահմանված խտությունից ավելի պակաս խտությամբ դասարան կարող է բացվել համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
35. Առանձին առարկաների դասաժամերին դասարանը կարող է բաժանվել խմբերի՝ համաձայն ուսումնական պլանի:
36. Խմբային ուսուցումը կարող է կազմակերպվել նաև ուսումնաարտադրական, փորձարարական բազաներում մարզաառողջարարական ճամբարներում:
37. Վարժարանում ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Որպես կանոն, արձակուրդի

Ժամկետները և տևողությունը սահմանվում են պետական լիազորված մարմնի կողմից:

38. Վարժարանում ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասի տևողությունը սահմանվում է հանրակրթության պետական չափորոշիչով: Մեկ դասի տևողությունը 45 րոպե է, բացառիկ դեպքերում այն կարող է փոփոխվել Համալսարանի գիտական խոհրդի որոշմամբ: Ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ըստ դասացուցակի, որը ուսումնական պարապմունքները սկսելուց առնվազն հինգ օր առաջ փակցվում է սահմանված տեղում: Սահմանվում է հնգօրյա ուսումնական շաբաթ:

39. Ուսումնական տարվա ընթացքում հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներին համապատասխան նախատեսվում են աշնանային, ձմեռային, գարնանային և ամառային արձակուրդներ: Արձակուրդների ժամկետները և տևողությունը սահմանվում է պետական լիազորված մարմնի կողմից: Բացառիկ դեպքերում արձակուրդների տրամադրման ժամկետները կարող են փոփոխվել:

40. Ուսումնական տարվա ընթացքում օրենքով սահմանված չափով դասերից բացակայած սովորողին քննություններին թույլատրելու, դասընթացը կրկնելու կամ դպրոցից ազատվելու դեպքերը սահմանվում են «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման» կարգի հիման վրա:

41. Առողջական վիճակի պատճառով դպրոց ժամանակավորապես կամ մշտապես հաճախել չկարողացող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար Վարժարանը կազմակերպում է տնային ուսուցում՝ համաձայն պետական լիազորված մարմնի օրինակելի ուսումնական պլանի:

42. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը սահմանում է պետական լիազորված մարմինը:

43. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք կարող են փոխադրվել առանձնահատուկ կրթության այլ ուսումնական հաստատություն՝ համաձայն պետական լիազորված մարմնի սահմանած կարգի:

44. Սովորողների իրավունքներն ու պարտականությունները, խրախուսումը և կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերը և կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և Համալսարանի սովորողների ներքին կարգապահական կանոններով:

VII. ՎԱՐԺԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

45. Վարժարանի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը և սույն Կանոնադրությանը համապատասխան՝ միաձայն ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների հիման վրա՝ մանկավարժական խորհրդի, տնօրենի, ծնողական խորհրդի, աշակերտական խորհրդի, առարկայական մեթոդական միավորումների, դասարանի ղեկավարի գործառույթների զուգակցմամբ:

46. Հանրակրթության պետական կառավարման մարմինների և Համալսարանի իրավասությունները Վարժարանի կառավարման ոլորտում սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Համալսարանի կանոնադրությամբ:

47. Վարժարանի կառավարման մարմիններն են՝ Վարժարանի մանկավարժական խորհուրդը և Վարժարանի տնօրենը :

48. Վարժարանի կառավարման կոլեգիալ մարմինը Վարժարանի մանկավարժական խորհուրդն է: Մանկավարժական խորհրդի նախագահը Վարժարանի տնօրենն է: Վարժարանի ուսումնական գործընթացի ղեկավարումն իրականացվում է տնօրենի և նրա տեղակալների միջոցով:

49. Վարժարանի մանկավարժական խորհրդի ձևավորումը և լիազորությունները սահմանվում են օրենքով, Համալսարանի կանոնադրությամբ և սույն Կանոնադրությամբ:

50. Մեկ ուսումնական տարվա համար մանկավարժական խորհրդի կազմը ձևավորվում է հետևյալ սկզբունքներով.

Վարժարանի մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են տնօրենի տեղակալները, առարկայական մեթոդական միավորումների նախագահները, դասղեկները, ծնողական խորհրդի նախագահը, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը, առարկայական մեթոդական միավորումների կողմից առաջադրված 3-5 առաջատար մանկավարժներ, ինչպես նաև Համալսարանի ամբիոնների վարիչներ:

51. Մանկավարժական խորհուրդը.

Համալսարանի կանոնադրության և սույն Կանոնադրության պահանջներին համապատասխան, իր լիազորությունների սահմաններում քննարկում է դպրոցի ընթացիկ գործունեության բոլոր հարցերը.

1)Քննարկում և Համալսարանի գիտական խորհրդի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում՝

ա)Վարժարանի Կանոնադրությունը,

բ) Վարժարանի հնգամյա ռազմավարական ծրագիրը,

գ)հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, ինչպես նաև նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները և այլ նյութեր,

դ) Վարժարանում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլ բնույթի) ծառայություններ մատուցելու հարցը,

ե) Վարժարանի ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր:

2)Ներկայացնում է առաջարկություններ Համալսարանի գիտական խորհրդին կամ ռեկտորին ա)աշխատողին պատվոգիր կամ շնորհակալագիր շնորհելու վերաբերյալ,

բ)Համալսարանի գիտական խորհրդի կազմում Վարժարանի ներկայացուցիչներ ներգրավելու վերաբերյալ:

3) Քննարկում և հաստատում է տվյալ ուսումնական տարվա ուսումնական պլանները և տարեկան աշխատանքային պլանը:

4) Կազմակերպում է վարժարանի տնօրենի, տեղակալների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների, ուսուցիչների թափուր տեղերի թեկնածուների առաջադրումը:

5) Վարժարանի մանկավարժական խորհրդի աշխատանքն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակի համար կազմված աշխատանքային պլանի համաձայն:

6) Ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերը:

7) Քննարկում է Համալսարանի կանոնադրությունից և սույն Կանոնադրությունից բխող Վարժարանի ուսումնամեթոդական գործունեությանը առնչվող այլ հարցեր:

8) Մանկավարժական խորհրդի ուսումնական գործունեությանը առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Թափուր պաշտոնների (տնօրեն, տեղակալ, մանկավարժ) տեղակալման նպատակով թեկնածուների վերաբերյալ որոշումները ընդունվում են փակ գաղտնի քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Մանկավարժական խորհրդի որոշումները ուժի մեջ են մտնում Համալսարանի ռեկտորի կողմից հաստատվելուց հետո:

52. Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում և ներկայացնում է Համալսարանի ռեկտորի հաստատմանը հետևյալ հարցերի վերաբերյալ`

- 1) Վարժարանի աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողության մասին,
- 2) հոսքերի և ենթահոսքերի ձևավորման մասին,
- 3) Վարժարանի ֆինանսական միջոցների տարեկան նախահաշիվը,
- 4) հաստիքացուցակը,
- 5) տարիֆիկացիոն ցուցակը,
- 6) ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում մրցութային ընտրությամբ տեղակալման հարցերը,

- 7)Վարժարանի շրջանավարտներին ավարտական փաստաթուղթ տալու, գերազանցության մեդալով պարգևատրելու մասին,
- 8) միջազգային կապերին ու այլ գործընթացներին առնչվող հարցեր:
- 53.Մանկավարժական խորհրդի աշխատանքը կազմակերպում և ղեկավարում է Վարժարանի տնօրենը, որն ի պաշտոնե խորհրդի նախագահն է:
54. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Մանկավարժական խորհրդի նիստերն արձանագրում է անդամներից ընտրված մշտական քարտուղարը, որի բացակայության դեպքում ընտրվում է նոր քարտուղար: Քարտուղարը պատասխանատու է մանկավարժական խորհրդի արձանագրությունների բարեխիղճ կազմման համար: Նիստի արձանագրությունը կազմվում է եռօրյա ժամկետում, ստորագրվում և վավերացվում է խորհրդի նախագահի կողմից: Մանկավարժական խորհրդի նիստը հնարավորության դեպքում կարող է ձայնագրվել:
55. Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր՝
- 1)Համալսարանի ռեկտորի նախաձեռնությամբ,
 - 2)տնօրենի նախաձեռնությամբ,
 - 3)մանկավարժական խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ:
56. Մանկավարժական խորհրդի նիստերը բաց են: Վարժարանի մանկավարժական խորհրդի կազմում չընդգրկված բոլոր մանկավարժները կարող են ներկա գտնվել նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:
57. Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով, հրավիրվում են ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ և այլ անձինք: Վարժարանի տնօրենը մանկավարժական խորհրդի նիստից առնվազն երեք օր առաջ պատշաճ կերպով տեղեկացնում է Վարժարանի աշխատակիցներին մանկավարժական խորհրդի նիստի անցկացման տեղի, ժամանակի և օրակարգի մասին: Մանկավարժական խորհրդի որոշմամբ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ:
58. Մանկավարժական խորհրդի նիստը իրավագոր է, եթե դրան մասնակցում են մանկավարժական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

Որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած մանկավարժական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Մանկավարժական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի փոխանցումն արգելվում է:

59. Մանկավարժական խորհրդի անդամների ձայների հավասար բաժանվելու դեպքում ընդունվում է Համալսարանի ռեկտորի առաջարկը:
60. Մանկավարժական խորհրդի որոշումների կատարումը ապահովում է Վարժարանի տնօրենը և արդյունքների մասին պարբերաբար զեկուցում է մանկավարժական խորհրդին:
61. Վարժարանի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Վարժարանի տնօրենը, որի լիազորությունները և պարտականությունները, ինչպես նաև պաշտոնի նշանակումը, պաշտոնից ազատումը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով:
62. Վարժարանի ուսումնական գործընթացը իրականացվում է տնօրենի և նրա տեղակալների միջոցով:
63. Վարժարանի տնօրենը ընտրվում է Համալսարանի գիտական խորհրդի սահմանված կարգով՝ փակ գաղտնի քվեարկության հիմունքներով: Ընտրված թեկնածուին պաշտոնի է նշանակում Համալսարանի ռեկտորը՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության համաձայնությամբ՝ մինչև 5 տարի ժամկետով և տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր: Տնօրենի գործունեությունը համարվում է մանկավարժական աշխատանք:
64. Վարժարանի տնօրենը՝
 - 1) կազմակերպում, ղեկավարում և լուծում է ուսման իրականացման գործընթացներից բխող հիմնախնդիրները,
 - 2) հսկողություն է իրականացնում դասավանդման, դրա բովանդակության և սովորողներին գիտելիքների մատուցման որակի, նրանց վարքի, արտադասարանական ու արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, Վարժարանի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,
 - 3) ապահովում է.

- ա) ներքին աշխատաքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,
- բ) ուսումնական պլանին համապատասխան կրթական ծրագրերի իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը,
- գ) սովորողների կյանքի և առողջության պահպանման, ինչպես նաև սովորողների ու աշխատողների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը,
- դ) կոլեկտիվում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը, ինչպես նաև արդյունավետ համագործակցությունը մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների միջև,
- ե) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, ուսումնանյութական բազայի հաշվառումը, պահպանումը, համալրումը, սանիտարահիգիենիկ վիճակի, աշխատանքի անվտանգությունը և սահմանված կարգով պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի վարումը և պահպանումը,
- զ) բարենպաստ պայմաններ Վարժարանում երիտասարդական և այլ մանկապատանեկան հասարակական կազմակերպությունների գործունեության համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
- է) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կառավարման խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի և ռեկտորի որոշումներով կամ այլ իրավական ակտերով և կնքված պայմանագրերով սահմանված պարտականությունների կատարումը,
- 4) սահմանված կարգով ձևավորում է Վարժարանի սովորողների համակազմը,
- 5) վերահսկում է Վարժարանի աշխատակիցների աշխատանքային գործունեությունը,
- 6) Մանկավարժական խորհրդի քննարկմանն է եերկայացնում Վարժարանի ֆինանսատնտեսական հաշվետվությունը,
- 7) ղեկավարում է Վարժարանի մանկավարժական խորհուրդը, աջակցում է Վարժարանի խորհրդատվական մարմինների աշխատանքներին, արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ կազմում է տեղեկանք, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը,

- 8) կազմում է Վարժարանի հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և ներկայացնում է Համալսարանի ռեկտորին,
- 9) գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում Վարժարանի զարգացման ծրագիրը,
- 10) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը չհակասող և Վարժարանի կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ,
- 11) տնօրենի բացակայության դեպքում Համալսարանի ռեկտորի հրամանով նրա լիազորություններն իրականացնում է տնօրենի տեղակալը, անհնարինության դեպքում՝ այլ անձ,
- 12) Տնօրենի լիազորությունները դադարում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով,
- 13) Վարժարանի մանկավարժական և այլ աշխատողների ատեստավորումը, ինչպես նաև սովորողների ծնողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Համալսարանի կանոնադրությամբ:

65. Վարժարանի տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը՝

- 1) պատասխանատու է Վարժարանի ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի կատարման, դասավանդման և կրթության որակի ու սովորողների՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն մակարդակի ապահովման համար,
- 2) հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնակարգում սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը,
- 3) Վարժարանի տնօրենի հետ համատեղ իրականացնում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների մեթոդական ղեկավարումը, ապահովում է Համալսարանի ռեկտորի հանձնարարականների կատարումը,
- 4) կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակը,

- 5) ղեկավարում է առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները, ընդհանրացնում և տարածում մանկավարժական աշխատանքի արդյունավետ փորձը, ուսուցիչներին հաղորդակից դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին,
- 6) կազմակերպում և վերահսկում է սովորողների ուսումնական պարապմունքների պատշաճ մակարդակով անցկացումը, ներկայացնում է առաջարկություններ ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման ուղղությամբ,
- 7) հսկում է Համալսարանի կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով ու կարգապահական կանոններով և սույն Կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարումը:

66. Վարժարանի տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալը՝

- 1) կազմակերպում և ղեկավարում է սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը,
- 2) ապահովում է Վարժարանի և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը,
- 3) կազմակերպում է սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ է ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար,
- 4) Վարժարանի, նրա ստորաբաժանումների, մեթոդական միավորումների ղեկավարներին և մանկավարժական աշխատողներին գործնական օգնություն է ցուցաբերում ուսումնա-դաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում,
- 5) ընդհանրացնում և միջոցներ է ձեռնարկում մանկավարժների՝ դաստիարակչական աշխատանքի արդյունավետ, սահմանված կարգով երաշխավորված կամ նորարարական փորձը տարածելու համար,
- 6) աշխատանք է տանում սովորողների վարքի, կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցում դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը,
- 7) վերահսկում է ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքը, սովորողների առաջադիմությունը և վարքը,

8) կազմակերպում է ազգային, մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ,

9) մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը:

67. Վարժարանի սովորողների հետ ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը կազմակերպում է ազգային, մշակութային ժառանգության ճանաչողական բնույթի մանկապատանեկան միջոցառումներ,

1) մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական գործընթացի իրականացմանը,

2) պահպանում է Համալսարանի կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարումը:

68. Դասարանի ղեկավարը՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում դասարանի սովորողների շրջանում սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժների հետ,

2) Համալսարանի և ծնողի միջև կնքված պայմանագրի դրույթներին համապատասխան ապահովում է Վարժարանի և ընտանիքի համագործակցությունը,

3) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն,

4) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, Վարժարանի տնօրենին ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն,

5) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ,

6) Վարժարանի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին կարգապահական տույժի ենթարկելու հարցը,

7) արգելում է սովորողների, ուսուցիչների և ծնողների սովորողի առողջության, կյանքի համար վտանգավոր, ինչպես նաև ուսումնադաստիարակչական աշխատանքները խաթարող նախաձեռնությունների իրականացումը:

VIII. ԽՈՐՀՐԴԱԿԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

69. Վարժարանում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և այլ կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական և աշակերտական խորհուրդներ: Աշակերտական խորհրդի անդամները Վարժարանի կառավարմանը մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

70. Առարկայական մեթոդական միավորումը՝

- 1) քննարկում է Ավագ դպրոցի առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տալիս երաշխավորություններ,
- 2) ուսումնասիրում և ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում,
- 3) աջակցում է ուսուցիչների որակավորման բարձրացմանը,
- 4) որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին նախապատրաստում է ատեստավորման,
- 5) կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ,
- 6) ուսուցիչներին հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն կվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ,
- 7) սահմանված կարգով կազմակերպում է փորձարկվող դասագրքերի փորձաքննություն,
- 8) մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում առաջարկություն ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման մասին,
- 9) կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում մեթոդական

միավորման անդամների միջև, և առաջարկություն է ներկայացնում Վարժարանի տնօրենին,

10) կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ:

71. Վարժարանի ուսուցիչները կարող են մասնակցել միջդպրոցական մեթոդական միավորումների աշխատանքներին:

72. Մեթոդական միավորումների նիստերը գումարվում են ամիսը առնվազն մեկ անգամ և արձանագրվում են:

73. Վարժարանի առարկայական մեթոդական միավորումները ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Կարող են ձևավորել մեթոդական միավորումներ հարակից առարկաների ուսուցիչներից:

74. Վարժարանի ծնողական խորհուրդը.

1) Վարժարանի դասարանների ծնողական խորհուրդները (նախագահ և տեղակալներ) ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից մեկ ուսումնական տարվա համար:

2) Վարժարանի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահը ընտրվում է փակ քվեարկությամբ, ձայների մեծամասնությամբ:

3) Վարժարանի ծնողական խորհրդի նախագահը խորհրդի նիստից առնվազն երեք օր առաջ պատշաճ կերպով տեղեկացնում է խորհրդի անդամներին նիստի անցկացման տեղի, ժամի և օրակարգի մասին: Ծնողական խորհրդի որոշմամբ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ:

4) Դասարանական և դպրոցական ծնողական խորհուրդների նիստերը իրավագոր են, եթե դրանց մասնակցում են ծնողական խորհուրդների անդամների ընդհանուր թվի կեսից ավելին, որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ մասնակցած անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ծնողական խորհուրդների յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք, ձայնի փոխանցումը արգելվում է,

5) Դասարանական ծնողական խորհուրդների նիստերին մասնակցում են դասղեկները, իսկ համադպրոցականին՝ տնօրենը:

75. Համադպրոցական հարցերի քննարկման համար ծնողական խորհուրդը հրավիրում է ընդհանուր ժողովներ: Ուսումնական տարվա ընթացքում, համաձայն Վարժարանի ուսումնադաստիարակչական պլանի, հրավիրվում են դասարանականը՝ ոչ պակաս, քան չորս անգամ, համադպրոցականը՝ երկու անգամ: Տնօրենի, ծնողական խորհուրդների և դասղեկների նախաձեռնությամբ կարող են հրավիրվել արտահերթ համադպրոցական և դասարանական ծնողական ժողովներ:

76. Վարժարանի ծնողական խորհուրդը՝

- 1) Վարժարանի տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների մեջ թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ
- 2) աջակցում է Վարժարանի դժվար դաստիարակվող սովորողների դաստիարակության, սոցիալական աջակցության կազմակերպմանը,
- 3) լսում է տնօրենի հաղորդումը Վարժարանի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին, ստանում ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումներ,
- 4) ամրապնդում է կապերը Վարժարանի և ծնողների միջև, մանկավարժների և ծնողների կողմից երեխաների դաստիարակության հարցերում ձևավորում է միասնական պահանջներ,
- 5) ներգրավում է ծնողներին սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում,
- 6) մասնակցում է սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, աջակցում է Վարժարանի ուսումնանյութական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով հովանավորների,
- 7) մասնակցում է ծնողագուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու գործին,
- 8) աջակցում է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը,

- 9)ապահովում է սովորողի իրավունքների պաշտպանությունը
Վարժարանում,
- 10)ապահովում է ծնողներին տեղեկատվությամբ, կազմակերպում սեմինարներ,
խորհրդատվություններ
- 11) ծնողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին, պարտականություններին
և Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության
մասին:
- 77.Վարժարանի ծնողական խորհուրդը համագործակցում է Վարժարանի
մանկավարժական խորհրդի հետ:
- 78.Վարժարանի ծնողական խորհուրդը տնօրենի նկատմամբ անվստահությունը
կարող է ներկայացնել մանկավարժական խորհրդին, ինչպես նաև Համալսարանի
գիտական խորհրդին:
79. Ծնողական խորհրդի քարտուղարը կազմում է նիստերի արձանագրությունները:
80. Ծնողական խորհուրդը իր աշխատանքների մասին հաշվետվություն է տալիս
խորհրդի կազմի վերընտրության ժամանակ:
- 81.Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործման համար
Վարժարանի ծնողական խորհուրդը Հայաստանի Հանրապետության
օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացնել այլ
լիազորություններ:

IX. ՎԱՐՇԱՐԱՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՌԱՎԱՐՈՒՄԸ

- 82.Վարժարանի սովորողների ինքնավարության բարձրագույն մարմինը
Վարժարանի սովորողների ընդհանուր ժողովն է:
83. Նոր ուսումնական տարվա սովորողների առաջին ընդհանուր ժողովը
(համաժողովը) հրավիրվում է Վարժարանի տնօրենի կողմից՝ սեպտեմբեր
ամսվա առաջին շաբաթվա ընթացքում:
84. Սովորողների ընդհանուր ժողովը (համաժողովը) հրավիրվում է՝
- 1) տարեկան առնվազն երկու անգամ սովորողների խորհրդի նախագահի կողմից,
 - 2) արտահերթ ժողով կարող է հրավիրվել սովորողների խորհրդի անդամների 1/3-ի
պահանջով,

- 3) համալսարանի ռեկտորի նախաձեռնությամբ,
- 4) Վարժարանի տնօրենի նախաձեռնությամբ:
85. Սովորողները կարող են ստեղծել նաև ակումբներ, միավորումներ ըստ նախասիրությունների:
86. Սովորողների ընդհանուր ժողովը (համաժողովը) Վարժարանի սեպտեմբերյան ժողովում ձևավորում է խորհրդակցական մարմին՝ աշակերտական խորհուրդ:
87. Աշակերտական ինքնավարության մարմինների (ընդհանուր ժողովի), դասարանական ժողովի, գործադիր մարմնի՝ աշակերտական խորհրդի, ինչպես նաև նրա ղեկավարության ձևավորման կարգը, լիազորությունները սահմանվում են Համալսարանի կանոնադրությամբ, սույն Կանոնադրությամբ և «Հայաստանի Հանրապետության հանրակրթական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությամբ:
88. Աշակերտական խորհուրդը, ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան, աշակերտներին անմիջականորեն վերաբերող հարցերի մասին ազատորեն կարծիք է ներկայացնում դպրոցի մանկավարժական կամ ծնողական խորհուրդներին:
89. Սովորողների խորհրդի ներկայացուցիչը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի այն նիստերին կամ հարցերի քննարկմանը, որտեղ քննարկվում են աշակերտներին անմիջականորեն վերաբերող հարցեր:
90. Համագործակցում է Համալսարանի ուսանողական խորհրդի հետ, կազմակերպում համատեղ միջոցառումներ:

X. ՎԱՐՇԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

91. Վարժարանում կրթական գործընթացի մասնակիցներն են՝
- 1) սովորողը,
 - 2) սովորողի ծնողը,
 - 3) ուսուցիչը,

- 4) ուսումնասօժանդակ անձնակազմը,
- 5) Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը,
- 6) վարչական աշխատողները:

92. Վարժարանում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ, որոնք կարգավորվում են Համալսարանի կանոնադրությամբ և Համալսարանի սովորողների ներքին կարգապահական կանոններով:
93. Համալսարանի ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում օրենքով և կանոններով սահմանված կարգով Սովորողների նկատմամբ կիրառվում են կարգապահական տույժեր:
94. Վարժարանն ապահովում է կրթական ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ, ձևավորում է անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտություններ:
95. Յուրաքանչյուր սովորող տարին առնվազն մեկ անգամ անցնում է բժշկական (պրոֆիլակտիկ) հետազոտություն, որն իրականացվում է Համալսարանի բժշկական սպասարկման ծառայության կողմից, իսկ դրա անհնարինության դեպքում՝ տարածքային սպասարկման առողջապահական կազմակերպության կողմից պետական բյուջեի միջոցների հաշվին:
96. Սովորողների համար Համալսարանի, ինչպես նաև սոցիալական գործընկերների, կազմակերպությունների, անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ շնորհակալագիր, գովասանագիր, դրամական խրախուսում կամ կանոնադրությամբ սահմանված այլ ձևեր:
97. Մանկավարժի իրավունքները, պարտականությունները և նրանց պատասխանատվությունը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի աշխատողների ներքին կարգապահության կանոններով, ինչպես նաև Համալսարանի և Աշխատողի միջև կնքված պայմանագրով:

98.Սովորողի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը ոչ պատշաճ կատարելու կամ չկատարելու դեպքում, եթե դրա հետևանքով սովորողի առողջությանն անգուշությամբ պատճառվել է միջին ծանրության վնաս, օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում այն անձը, ում վրա դրված են համապատասխան պարտականությունները:

XI. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

99.Բոլոր այն հարցերը, որոնք չեն ներառվում սույն Կանոնադրությունում, կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Համալսարանի կանոնադրությամբ:

100.Սույն Կանոնադրությունը հաստատվում, փոփոխվում և լրացվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

101.Վարժարանի վերակազմավորումը կամ լուծարումը կատարվում է օրենսդրությամբ և Համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով: